# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27 ապրիլի 2017թ. թիվ 42

## «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԳԱՎԱԹ-2017» ՄՐՑԱՇԱՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԶՄԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.19 կետի «ա» ենթակետով և նպատակ ունենալով նպաստել մարզում սպորտի զարգացմանն ու տարածմանը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ  եմ.

1. Հաստատել «ՀՀ Լոռու մարզպետի գավաթ-2017» մրցաշարի անցկացման կանոնակարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Մրցաշարը բարձր մակարդակով նախապատրաստելու և անցկացնելու նպատակով ստեղծել կազմկոմիտե՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Կազմկոմիտեին՝

Սույն որոշման 1-ին կետով հաստատված կանոնակարգի պահանջների կատարման նկատմամբ սահմանել հսկողություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. ապրիլի 27
ք.Վանաձոր